

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Արևից  
թոխմախոց 6

9(47.925)

Ա - 78



Թ. ԱՎԵԼԱՔԵԳՅԱՆ

# ԱՐՄԵՆ ԹՈՒՄԱԿԻՑԱՆ

ՀՕ.Պ.Յ.Ա.Պ.Յ. - Ա.Ի.Ա.ՋԻՆ Գ.Ա.Գ.Ա.ՓՈ.ՐԿԿԱՆ  
Ա.Գ.Ա.ԶՈ.ԿԸ. ՀԱ.ՅՈ.Ց ՄԵԶ. - ՄԵՐԿԵ-ԿՈՒ. Ա.Յ.Ի.  
ՏԵՐ - Մ.Զ.Ր.Ա.Խ. 1791 - 1792 թ. թ.

92  
4-78

ՀԵՐՄԵՍ՝ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1926.




19 AUG 2011

11.03.2013

5933

24 JAN 2006



ԱՐՄԵՆ ԹՈՒՄԱԿԻՑԱՆ

14

## ԹԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

Digitized by Google

三

1865

## ԱՐՄԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ՀԵՐԱԿԱՆ-ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՍԻՆՈՎԻ

33980

9

ՀԱՎԵԼ Վ. Խ. - Ս. Բ. Ա. ԶԻՒՆ Գ. Ա. Ղ. Ա. ՓՈՐՄԱԿԱՆ  
ԱՎԱԶՈՒԿԸ ՀԱՅՈՅ ՄԵԶ. - ՄԵՐԿԵ-ԿՈՒԼԱԲԻ  
ՏԵՐ - ՄԶՐԱՅ. Խ. 1791-1792 թ. թ.

419

САНКТ-ПЕТЕРБУРГ  
ОБЩЕСТВО ПО МАСТЕРСТВУ  
СИГАРЫ  
ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА  
С. А. НЕСВАЧА  
СОВЕТАЛЬСКИЙ ОТДЕЛ  
№ 6

## “ՀԵՐՄԵՆ” ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

З Е Р Т К А У Н = 1926.

## ԱՐՄԵՆ ԹՈԽՄԱԽՅԱՆ

(ՀԱՏՎԱԾՆԵՐ ՆՈՐ ՎՈԳՈՒ ԹՈԹՈՎԱՆՔՆԵՐԻՑ)

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,  
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29  
ԳՐԱՌԵՄ. 671Բ  
ՏԻՐԱԺ 1000

Ա. ու ու զ ու բ ու ն

- I. Օռագմանվարտական հայոցի և անցյալի մասին:
- II. Տաճկանայ խնդիրն ու հառաւուկական խմբերը:
- III. Ճաղի վեսի նվազներ ու դաշնի նուռզ:

## ԱՌԱՋԱԲԱՆ

Արսեն Թովհամախյանի յուրորդինակ ու շատ հետաքրքրական հայացքների մասին առաջին անգամ հիշտոտակություն արել ելինք մեր՝ 1913 թվականին լույս տեսած «Միքայել Նալբանդյան» վերադրով գրական-պատմական վերլուծության մեջ (Վաղարշապատ, Էջ 50—53 ու 60—62): Մեկ տարի հետո, 1914 թվականին, նպատակահարմար դատեցինք հիշտոտակածու ու այլ նորանոր հատվածներից ոզավելով՝ տալ այս մոռացված դուրծի աշխարհայացքի հակիրճ բնութագիրը, զոր և նույն տարում կեղծանունով հրատարակվեց «Հոբելոն» ուղաթերթում (Թիֆլիս, 1914 թ. № 86, 80 ու 95):

Փռփոխված հանգամանքներն այժմ հնարավորություն են տալիս նույն այս աշխատությունն իբրև առանձին գրքույկ հըատարակելու հեղինակի խոկալան անունով:

Այն ժամանակ—12 տարի առաջ—մեր փափազն եր այս գրական-պատմական ակնարկով վոչ միայն ընթերցողների մտքում հետաքրքրություն, իսկ սրառում՝ կարելցություն ու հարգանք շարժել դեպի Արսեն Թովհամախյանը, այլև աշնչիվ գրգիռ զարթեցնել այս տարարախտ գործչի վորչ մնացած ընկերների ու ծանր ժնիւրքների հոգելու վասակար լուռթյունը և ի լուր աշխարհությունը կազմուելու նրա կյանքի ու մանավանդ խորհրդավոր սպահի պատմություն մասին իրենց բոլոր իմացածը:

Այնուհետեւ մենք նույս ունեցինք ներկայացրած որինակով համոզելու ուսումնասիրողներին, թէ վոչ միայն առաջնակարգ, այլև յերկրորդական ու յերրորդական համարված դուրծիչների կյանքի ու յերկիրճ հետազոտությունն ել կարսղ և յերեխն նույն իսկ շատ արժեքավոր փաստեր մատակարարել հայ հասարակական մորքի զարգացման պատմությունով հետաքրքրվողներին: Այս համարքի կը գրուեմ նրանց՝ չսահմանափակելու անդամնիների ներ-

աւ ավանդական շրջանակով, այլ նորանոր փաստեր վրանելու փոքրանշակների ու անհայտ միացածների շառակայքը:

Հիմա, մեր որեւում, յեթէ այս գրասնական պատմական ակ-  
նարկը, բացի վերծնիշալիք, կարողանա նաև մի փոքրիկ հիշե-  
ցումն լինել այն մասին, թե պետք ե ավելի ուշադիր ու մարզ-  
սկասական տեսակետից ավելի զիտակցական վերաբերմանքի ու-  
սարկա դարձնել հայ աշխարհայցքների պատմությունն, ասդ  
մենք կրնամարենք, փոք առաջարկված աշխատությունը լիովին հա-  
սել է իր նպատակին:

Գրվածքը վերատպվում է անփոփոխ: Դեմոկրատական պատմահայացքի մասին խռոված տեղում միայն անհրաժեշտ համարեցինք ավելացնել մեկ համարկ ծանոթություն՝ Շահամիք Շահամիքը անդ մասին: Հայ բուրժուազիայի խոշորագույն իդեոլոգի՝ աշխարհայացքը մեկ պատկեր ծանոթության մեջ խռովու բան չեն անշարժ, բայց և այնպես մեր Ըստ բորբոքման՝ մարդարկելին այս մասում ամենին չհիշատակելու ել աղաղակող անարդարություն կը թիւիք: Առայժմ լավ է բիշ, քան վայրին: Ազիլին ասվելու յէ նրան նվիրած հատուկ ուսումնասիրության մեջ:

Հողգածիս մի քանի տողերը կարգալիս պետք և մտաքերեց վար ակնարկը գրված և 1914 թվականի փետրվարին, յերբ սուսպիրման հայտնի բանակցություններն ելին աեզի անենում Տաճկա-հայաստանի վիւտեմբերում բարենարդութեամեր մաշնկու մասին:

իբրի հավելված՝ գրական-սպասմական տեխնարկիս կցել ենք  
«Առաջին գաղափարական տվյալը» հայոց մեջ՝ Մերկե-Կուլպարի  
Տեր-Մզրախ. 1791—1792 թ. թ. 2 գերնազբավ Ֆեր հոգվածը, վար  
անփոփխ արտատպիում և 1919 թվականի ապրիլի 6-ին Յեղաս-  
տում հրատարակված «Նվեր գորբերին» միորյա թերթի:

P. U.

1926 թ. ապրիլի 12-ին.  
Յերևան:

Տաճկահայ ազատագրական շարժման փառապես  
պարագութիւններից չեր Արքան Թոխումախանը՝ Նրա ա-  
պահանջմանը չի գրվում Մէկբաիչ Խրիմյանի, Բափոյիլ Պատ-  
նումը չի գրվում Մէկբաիչ Խրիմյանի, Բափոյիլ Պափու, Գրիգոր  
կանյանի, Միքայիլ Նալբանդյանի, Բափոյիլ Պաթու, Գրիգոր  
Արծրունու ու մյուսների անվան կողքին Նա վոչ մեղ-  
րաշուրթն հրավիրակ եր, վոչ շահնթառաք սալմերու,  
վոչ գիտուն թեորիատիկ, վոչ բորբոքող վիպատշն ու  
վոչ ել ազգեցիկ ղեկավար։ Քչիրը լուծ կըլինեն Նրա  
մասին, ամելի քչիրը՝ կորպացած սակավաթիվ յերկե-  
րը։ Քնիթերցաղներից վօմանց թերիս հայունի յի Նրա  
վողքերգական մտեր, բայց կյանքին ընդհանրապէս ան-  
ձանոթ և գրադիւն բազմությանը Կենդանի ժամանա-  
կակիցները չնա պատմում նրա մտելն, իսկ բազմու-  
թագ հետարշների մեջ ել չզտուից միելը, վոր «Արի-  
ւել արտաքր» դոչիր այս մտացված մշակին

Բագ և Կամ  
— Մեկը վաստուրականի Արթի ձարպուհնարից,  
մի կայծ Խրիմյանի շնոցից, Վարդաղա զարոցի աշառ  
կերտ, անաղմուկ վարժուական, համեստ զառախոս, ա-  
ռաջողեմ աշխատակից և ապա վերջապես մի անմեղ  
նահատակ՝ այլված խարույկով փոք պատրաստել եր-  
շպրայբառական ձևով:

Զորապես չեր, այլ ուսիկ զինվոր, բայց բաշխ  
հաճախ և պատճեմ, այս հասարակ մարտիկը յիշի-  
կանակը է առաջարկում:

մըն շատ ավելի հեռու յեր տեսնում և ճիշտ ըմբռնում թշնամու շարժումները, քան այլ մեծանուն հրամանատարներ:

Այժմ, յերբ 35 տարի հետո նորից հնչում և բարենորոգումների ավետիքը տաճկահայի ականջին, յեր այլ տեղերի հայեր մեծամեծ հույսերով ու ակնապիշտապատճենի մի քանի կարծիքները, վորոնք կազ ունեն այս ինդրի հետ և վորոնց մեջ խոսում և մի բացառիկ, նորորինակ ու ազնիվ տրամություն, տրամություն, վոր առաջանում և դեպի անրազդ հայ գյուղացին ու նեցած մեծ սիրուց ու այս զիաակցությունից, թի այս թշվառ զասակարգից զուլումն յերբեք պակաս չե յեղել անցյալում:

Սակայն չշտապինք ասած, այլ ուշադիր ու կարգով լսենք հայ շինականի բարեկամի թափալի տրամունջները: Լսենք մի քանիսը նոր վոգու թոթովանքներից, վորոնք հնչում կը ին 30 տարի առաջ:

\* \* \*

Նախ անցյալի մասին:

Ցեթե մի ուսումնաօնք նյութ ընտրե պատմական հայացքների զարգացումը հայոց աշխարհում, ապա հեշտությամբ կընկատե, վոր մեր նոր զրականության հեղինակների մեծամասնությունը ներկայի ու ապագայի վերաբերմամբ ռամկավարական սկզբունքներ դու վանելով հանգերձ՝ մոսանում և նույն սկզբունքները, յերբ բերան և բաց անում հայ անցյալի մասին իսկ հայության մասնակի մասին իսկ հայության մասնակի մասին:

Նրանք թեև ներկայումս ձգտում են ժողովրդի գերիշխանության, սուկայն միենույն ժամանակ յերեւանկյալ հիանում են հայրենի հարատությունների մանրում մեծ փառատենչ ինքնակախներով, զայլայլում այս ու այն նախարարի ավերիչ արկածների մասին, յեր գործ կորցրած գանձն ու թագը, սուրբն ու գրաշլ և այն, մի խոսքով՝ վոգեորգում այն կարգերով, յերբ դրազգ տոհմապետն ու խորամանկ քուրմը, սիդացող իշխանն ու հեղանամբույզ երեցն ի Քրիստոս Յիսուս տիրաբար վայելում ելին ստրուկ ամբոխի արգար աշխատանքի արդյունքները:

Բարեբաղդաբար այս մեծամասնության հակառակ մեզանում ել յեղել են անհատներ, վորոնք յերբեմատպիս ազատվելով արխատոկրատական իդեոլոգիայի ազդեցությանից՝ հետեղովական գեմովէրասմներ են հանդիպացել հայ անցյալի վրա յել նայելով արհամարհված ամբոխի համարձակ պաշտպանի տեսակետով:

Բազմաթիվ չեն սրանք:

Առա մի Մեսրովք Թաղիազյան, վոր երևանցիներին գրած նամակում աշքալուսանք և տալիս հայրենակիցներին պարսից լծից ազատվելու համար և ավելական պահանջներին առերան յերբեք տայալիք ազատ որեր չեն բացնում, թե հայերն յերբեք տայալիք ազատ որեր չեն բանական իսկ Արշակունյաց որերում, յերբ, չիշտ ե, «թագավորությունն իրենցն եր, բայց զուլումըն ամեննեին պակաս չեր»:

Առա մի Մատթեոս Մամուրյան, վոր հավանարին թումաս Բոկի աղեցության տակ զայրույթի շահթեր և ցոլացնում հայ պատմագիւնների, մասնավորապես Քերթողահոր հասցեյին այն պատճառով, վոր նրանք խոսում են միայն ու միայն թագավորների, կաթուղինուում են միայն ու միայն թագավորների:

կոսների ու սրանց արթանյակների մասին և անտեսեն առնուած այն ժողովուրդը, վոր սրանց կերտելու գաբեր շարունակ:

Ահա մի Ռաֆայել Պատկանյան, վոր հայ պատասխան յերգել է տալիս

«Հայկ ու Լևոնին մոռանանք, մեռանք»

Թափ տանք մեղանից վորչին հնության...»

և ընկերներից մեկին գրած նամակում հաղորդում ե  
այն մասին, թե պատրաստել է հայոց պատմության  
զիրք, թեև փաքրածավալ, բայց մեծարեք այն տեսա-  
կետից, վոր «Թագավորների պատմություն չե, այլ  
ազգի»:

Ահա մի Միքայել Նալբանդյան, վոր կարձատես ու կիսագրագետ մարդկանց և թողնում ազգային պատմության փլատակները քրքրելով զգաբանալու ու ցնծալու թեթևամիտ զրադարձունքը, մինչդեռ իրան վերապահում և միայն վողբալ ու մորմոքվել հրապարակելով ու խօսատվանելով այն տիսուք ձշմարտությունը, թե «մեր պատմության միջից վոչինչ չե միիթմարում մեզ» և թե «հայ ազգի կառավարության կերպը ամենին նման է յեղել անքաղաքացի ազգերի կառավարության կերպին»:

Ահա մի թափթի, վոր իր նշանակոր վեպի առաջարանում գանգատավում է, թե ինչպիս մոռացված է ամբոխը հայ ազնվագայտ մատենադարձնեւակ եւստեղ:

Մեկ յերկու այլ անուն եւ և մենք ակամայից դագսարեցնելով այս թվաբիությունը՝ պիտի տարակուած շուրջներս նայենք և ապա սկսենք մուրիկ-մուրիկ պեղումներ անել մեր գրականութանը մեջ ուստ-

կտվարական պատմական հայացքի նմուշներ գտնելու  
համար:\*

Արսեն Թոխմախյանը մեր մտահունչած համեսդական ժողովապատճենից է, և նրա՝ հայրենի անդյալի

\* Հետազոյում կատարած հետազոտությունները մեկ բերին  
այն յեղակացրւթյան, վոր հայոց պատմության նկատմամբ ուսմ-  
կագրաբական հայացքի կողմանակիցների կարապես ու նշանավոր  
ներկայացնեցին պետք և համարել Վորովայի փառացի հեղինա-  
կին, ըստ վորում մենք դատիք հանեն, վոր այս գիրը հրատարակիցն  
և վոչ թէ 1773-ին, ինչպես տպագրված ե գրքի վառ, այլ բավական  
հետո, և նրա հեղինակը վոչ թէ Հակոբ Շահամբիլյանն է, այլ որտ-  
ու հայրը՝ հազարայ նշանավոր գործիչ Շահամբիլ Շահամբիլյանը:

Сілуропакажіթ фінасист-і віорог Եջміածн վորոբ բառ-  
գլаркою та բարбадос կետապության շնորհիվ դժվար համա-  
սալի յեն, աշխարհաբար թարգմանությամբ ու կանոնավոր կտո-  
ղությամբ խիստ արմատական գույն են ստանում, և նրանց հե-  
ղինակի մատ, վոր ապօնել և XVIII դարում և դրէլ ֆրանսիան-  
մեծ հեղափոխությունից առաջ, չափավոր հայցքի տեր են յերե-  
պում այս կողմէց Միքայել Նալբանդյանը Բափայել Պատկանանն  
ու Թափին, վորոնք ապօնել և զրել են 1789, 1830 ու 1848 թվա-  
կանների հեղափոխություններից հետո Հայ անցյալի մասին Ա-  
խոսելիս Շահամիրյանը գտում է, ինչպիս թուղարական ու իշ-  
խանական ինքնակալության համոզված հակառակորդ: Այդ անցյա-  
նանական ինքնակալության համոզված հակառակորդ: Այդ անցյա-  
նանական ինքնակալության համոզված հակառակորդ: Այդ անցյա-  
նանական ինքնակալության համոզված հակառակորդ:

Օթող հայոց պղը հսմարի, — զբուժ եր նա, — և անշտառը  
օթող հայոց պղը հսմարի, — զբուժ եր նա, — և ան-  
շտառը ությամբ քննե ան ց աւ ժ ա ն ա կ ի հ ա ն-  
շտառը ությամբ քննե ան ց աւ ժ ա ն ա կ ի հ ա ն-  
շտառը ությամբ քննե ան ց աւ ժ ա ն ա կ ի հ ա ն-  
շտառը ությամբ քննե ան ց աւ ժ ա ն ա կ ի հ ա ն-  
շտառը ությամբ քննե ան ց աւ ժ ա ն ա կ ի հ ա ն-

մասին ասածները հայ դպրության մեջ դեմոկրատական հայացքի թանգագին բնկորներից են:

Թոխմախյանի ժամանակ հայոց պատմության սոցիոլոգիական ըմբռնումն համարյա գոյություն չուներ: Մասնագետներին ու գիլետանտներին չեր հետաքրքրում հին հայոց հասարակական կազմակերպությու-

ներն ել ին: Յեթէ յերեմին յերեմին թագավորությունը վեճակվեց բարի մարզաց, ապա մեր ողուան ավելի չեղափ, քան այն, վոր մենք յեղանք ու մնաց ինքն քնուան ցատրուկն, այլ և ժամանակ առ ժամանակ մացու բնության փոփոխական լիներու հետեւնքով սասափի նեղուուններ կը եց ցաւններ կը եց ինքն քնուան ցից: Իսկ յերը թագավորությունը վեճակվեց, բնուակառակը, չար ու անմիտ ժարդանց, սրանց ազատության պատմից ու յերջանկություններից մեջ զլորեցին ցած... Թեպետն մենք ափօսում ենք, վոր ինքնակառաքած Հայիկ, Տիգրանի, Արմենի (ՏԸԸ!): ու մեր ուրբերաների յերջանիկ ժամանակն անցավ, և մենք զգուշացանք ու շփակեցինք մեր փոփոխական բնության դանիրն (այսինքն՝ ուամկավարություն չհաստատեցինք, թ. Ա.): սակայն մեր ինքնակամ ինքնակամ ու ըստ քմաց հրամայող տեսք եւ ըստ քմաք եւ ամառակամ պետք եւ գոհություն մատուց անենք և փառք տանք Աստծուն, վոր մենք միայն այսպան վնասով պրծտնակ եւ նրանք մեռան և թագվեցին գերեզմաններում: Իսկ մեր այն իշխողները, վորոնք ամբարտանալով անիրավացան և զոռոզությամբ ու ինքնահաճությամբ գարեցին իրենց իշխանությունը Հայոց աշխարհում՝ զը ըել ով, կողուղակալով և ամեն անանական բնությամբ ամեն ան կան քամ ան կացնեն և ով իր ենց կը յանք ի ժամանակ ան ակները՝ նրանք իրենք կորան զնացին և կորցրին մեր պատիքը, Հայոց ազգի սկրւնդը գերության ժամանեցին, աշխարհն ել ուրիշ ազգերի ժամանակություն զարձրին: Կորստի ժամանվեց յերկիրն, ընկավ ինքնակալ իշխանությունը, կորան և ցրվե-

նը: Գիտական ջանքեր թափում եյին բացառապիս զեսքերի, անձերի ու թվականների սառւզության վերա: Ահա պատմագիտական այս դարմանիզմի շրջանում հնչում և ձայնը այս «տղայի», վոր ավելի պարզ ու ձիշտ եր պատկերացնում հայ անցյալի եյությունը, քան այլ «իմաստուններ» ու գիտուններ»:

«Այն յերկիրը, ուր ևս մի քանի ամիս առաջ պըտակեցի, — զբում և թոխմախյանը Պարսկա-Հայաստանի մի գավառին նպիրած զրքույկում 1882 թվին, — նա ինձ առ ու մ արթնաց հիշատակ հիշատակ ու մասի կությունները կը հինգ հայ երի կը առ քի ն մ անությամբ բլ: Թեև այնակ չկան հայեր այցեմ, այստեղ ապրում են թուրքեր, բայց ապրում են հին յեղանակով: Պատմական նախարար եր չկան, բայց կան իրաներ, ցեղապետներ, չկան,

ցին իշխաններն, իսկ անմեզ զատները մինչև այսոր մասցին զիշտակից զայլերի բնակներում...»

«Արդ հարցում եմ քեզնից, ընթերցող, ասա ինձ, բարեկամ, — ազգականում և ցակառ Շահամիրյանը՝ մի սեղմ ու անողոք բամձեւով արտահայտելով յուր պետքեական վերաբերմունքը հայ անցյալի նկատմամբ, — միթե կամենում ես նորից ընդունել (վերականգնել) այն սահմանափակ տեսությունը, վորի ժամանակական բնակչությունը եր միմիրայն մինչեւ գաւառապահ, իսկ վնասը հասել պիտիսի... (Շահամիրյան «Որոշյլ վասաց», Դուկասյան մատենադարան, Թիֆլիս, 1913, էջ 18, 34 ու 35):

Հայ տոկորական կազմականի գաղափարախոսի այս սրբիկ խոսքը վոր ապել և մեղանից մոտ 150 տարի առաջ, մի յերեկություն մեջ: Ազնվական զատկարգիքի աշխարհայացքների պատմության մեջ: Ազնվական զատկարգիքի պատմական աշխարհայացքը՝ արդեն մոտենում եր յուր մայրամուտին: Հուրիմասել եր սկսուն հայ ցյերերող զոտից զիմոլիքտական պատմահայացքի լուսաբացը:

վորոնք նույնապես ավերում, կրակի յեն տալիս միմի-  
անց իերկիրները, վասում են ընդհանրության իրենց  
անձնական թշնամության համար։ Նրանք նոյնպես տի-  
րապետում են միահեծան, ամրողական գոյությունն  
ու կյանքը յենթարկված և անհատի հաճույքին ու կա-  
մայականությանը։\*

Ի հարկե Թոխմախյանն այս տողերով սթափեց-  
նող սառը ջուր և լցնում այն հնապաշտների գլխին,  
վորոնք քրտնաթոր վոսկեզոծում ելին հայ անցյալը՝  
Բայց պետք և աղզարարել, վոր նրա սոսածը լրկ նա-  
խտական իմաստով համարակալու չեւ նրա հիշած նմա-  
նությունը գիտական արժեք ունի և ավելի հարտգատ  
և ներկայացնում իրերի դրությունն հին Հայաստա-  
նում, քան գիտական ժարդունով գրված ընդարձակ  
շաղակարասությունները:

Նախարարները վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ խաներ: Անզուշտ, մի Բագրատունի տանուտեր, մի Սյունյաց իշխան, մի Արծրունի սեպուհ կամ Մամիկոնյան «աղառ» կարող եյին յերեմն ավելի քաջ, խելոք, գրասեր և այլն լինել քան մի Հատան խան, կամ Իրահիմ խան, բայց և այսպիս նրանց վերաբերմունքը դեպի ժողովուրդը մինույնն եր. թէ առաջնուներն ու թէ վերջնաներն, իբրև կալվածտեր աղնամական դասա-

\* Արահն Թափախյան. «Մատիս լեռների հարավային սառ-բռններ», Թիֆլիս, 1882, Ա. գրքույթ, եջ 25—26. Հաղվածիս մեջ բոլոր ընդդժունները մերն են:

կարգի անդամներ ապրում ելին ժողովրդի հավելաւ  
աշխատանքով:\*

իրեն ազգայնության գաղտափարի պաշտպան  
թոփսմախյանը բացասում է հայ անցյալը նաև այն  
տեսակետից, վոր հիշյալ գաղտափարի փոխարկն հին  
հայոց կյանքում իշխան է ցեղի, տոհմի գաղտափարը  
ճիշտ այնպես, ինչպես է մինչդեռ այժմ քրդարի մեջ:

\* Խանահպատակ ժողովրդի գրության մասին այս հեղինակը գրաւ եր, և խանապես տուիլ այս յերկուումը ապրում չեն ժողովրդը, այլ մի տեսակ անառունենք, փառանդի իրենց բոլոր եղանականությամբ պատկանում են ամբաղջապահության, Գերեխները այն առավելությունը ունեն, վոր գունե նրանք կուշտ են փորով, մերկու թյունը առանպարզած է: Աւզպակի հարկը ծանր չեն, բայց անուղղական բարեկարգաթիվ են: Խոչ վոր խանը ցանութիւն ի իրենից դրեւ նաև անձնավորությունները ընծայի կամ կաշառքի անունով, մի խառնով խանի արած ամենն առանձիւ է պատկիներն և պարտական ճարերը Բայց հայր՝ հպատակները պարտավոր են նույն խանի ինքանակ հոգերը գտնել, ցանել, ըբել արդյունքը տնօգութիւնի, առանց համար գոտեր շինել անսունդները պահանջներ, փորության կախառելու իրավունք չունին, դրանք միշտ պիտի ծնեն և փունք անան, որինակ նրա վոշխաններն ու կիսլիր ամեն տարի ուղարկած ափան տան մի-մի գոտեն ափանի տան մի-մի գոտեն, մի-մի հորին: Աշխանական պատճեն պահանջը և բուրգը: Հակառակ զեսպում գյուղացին պատճեն պահանջությունը յեւ չուի սեպհական իրավունքին յերկու տերեւ կան առաջարկագրությունը և խանները: Ամեն մի գյուղացին նաև իր կողմանական պահանջը և վճարում արմանիթից և ընդունենարից և այլն:

գերին ե: Յեզ ինչ կլիներ մեր տաճկաստանցի յեղարք վիճակը անցյալ մհծ սովին, յեթե մեր նախարարական ցեղերը դեռ ապրել շարունակելին: Հավատացնում եմ ձեզ, վոր վոչ մի հայ չեր ապրի պատուհասից, և մենք Տաճկահայաստանումը այժմ աղդի տեղը նրա ընտարձակ դերեզմանաստունները կտնելինք միայն: Նոքա (հին հայերը. Թ. Ա.) ինչպես մի ազգ, ինչպես մի հայրենյաց փորդի յերբեք չեն ապրել յերբեք չեն թագավորել: Ն բանք բաժանված են յեղել բազմաթիվ ցեղերի, վորոնք անդադար կը ծեւ մաշել են իրարու: Նախնի հայերը քաղաքականապես չեն ապրել ինչպես մի ազգ, ինչպես մի կառավարչական մարմինք\*\*\*:

Յերբ Արևմտյան Յեփրապայի մի քանի թեորեմիկներ հայուարարեցին, վոր ազգայնության գաղափարը ժամանակակից կապիտալիստական անտեսության իդեոլոգիական արտացոլումն ե, մեզանում յեղան այս խոսքի վրա ինդացողներ, վորոնք հեղնորեն նկատում ենին, թե այլ և ապրանք և այլ ազգություն: Բայց ահա թե ինչ և ասում թոփսմախյանը, այս խոհուն աղջասերը նույն գաղափարի ծագման մասին:

«Համազգային գաղափարով ապրելու դարեկությունը կարելի յեզն թվականից համարելու յերբ մեր նախարարական, թագավորութական ցեղերը չեն չեղել վերջապահելու մեր միջնական միջնից մի հայուարական պատուինքների և արհեստների մասին վորական պարագմունքների մեջ առանձանական վարագիրը, ինչ կա: Պատմության մեջ առանձանական ժողովրդի, այդ ուսմիկ կոչված արարածների վրա խոսվում ե այն ժամանակ, յերբ նոքա սովից կամ փարակիչ հիվանդություններից ջարդվել են տառնյակ հազարներով կամ մի բանագործի վոտի կոխան են յեղել գերի յեն գնացել և կամ գաղթել են: Դրանով միայն մենք հասկանում ենք, վոր Հայաստանում ժողովորդ ել և յեղել: Բայց

\* Ա. գրքույի, էջ 42—43:

\*\* Նույնը, էջ 21:

\*\*\* Նույնը, էջ 23:

ըս: Այդ հետեանքները թերեւ այնքան ել յերկար չշարունակվելին, յեթե հոգեորականությունը աղնավականության տեղը չըռներ:»\*

Հասկանալի յե, վոր թոփսմախյանը գաղափար չունի անտեսական այն պայմանների մասին, վորոնք ազնվականության անկման ու «յերրորդ դասի» բարձրանալու պատճառ են հանդիսանում, բայց և այսպիս նրա ու Արևմտաքի թեորեմակների ասածների հիմնական նմանությունն այն ե, վոր բոլորն ել աղջայնության գաղափարի հայրենիք և համարում այն միջավայրը, վորտեղ գերիշխող չե կամ բացակայում ե աղնվական կալվածատեր դասակարգը: Այս միջավայրը նոր դարին և հատուկ: Աղդայնությունը բիորդիական յերեռությունը չե, այլ պատմական, սոցիորզիական, —կատարել թոփսմախյանը ժամանակակից հասարակութանական, նման, յեթե ծանօթ լիներ այժմյան տերմիններին:

«Մեր պատմության մեջ վատ ուսումնատիրվածը, չարունակում է թոփսմախյանը, —ժողովրդական կյանքի մասն ե, մինչեւ անգամ կարելի յե ասել, վոր մեր պատմությունը ազնվական ցեղերի պատմությունն ե միայն: Այսաեղ ժողովրդական պարագմունքների և արհեստների մասին վորական չկա: Պատմության մեջ առանձանական ժողովրդի, այդ ուսմիկ կոչված արարածների վրա խոսվում ե այն ժամանակ, յերբ նոքա սովից կամ փարակիչ հիվանդություններից ջարդվել են տառնյակ հազարներով կամ մի բանագործի վոտի կոխան են յեղել գերի յեն գնացել և կամ գաղթել են: Դրանով միայն մենք հասկանում ենք, վոր Հայաստանում ժողովորդ ել և յեղել: Բայց

\* Նույնը, էջ 23:

նա այնքան ստոր ե յեղեւ վոր ջոր ի-  
ների ու ազնիվ ձիերի ցեղերն ավելի  
լավ մտքով են հիշվում պատմության  
մեջ: Իսկապես նա զբոյի նշանակու-  
թյուն ե ունեցեւ վոր թվերի կողքին  
գրվելով գումար ե կազմում: Հայ աղ-  
նվականության սիստեմը միշտ ա-  
նառնության աստիճանի յե հասցը ել  
ժողովրդի վիճակը: Ժողովրդական գասակար-  
գից բարձրացած հերոսներ մենք չենք ունեցել մեր  
մեջ. ստրուկների միջից յերեք հերոս չի ծնվիլ»:<sup>\*</sup>

Այս մի քանի հատվածները բավական պարզելով

ոխմախյանի հայացքները՝ յերեան են հանում՝ այն  
մեծ տարբերությունը, վոր կամի կողմից այս հեղի-  
նակի և մյուս կողմից հայ պատմագիրների ու նոր հե-  
ղինակների մեծամասնության պատմական ըմբռնում-  
ների միջնեւ:

Պատմագրական արիստոկրատիզմի ամենախիդախ  
↓ հակառակորդներից մեկն ե Արտեն Թոխմախյանը: Յեզ  
յեթե սա պատահներ Մովսես Խորենացուն, ապա սրանց  
միջն մեծ վեճ կծագեր, չե՞ վոր քերթողահայրը սուում և  
Հայոց աշխարհի վիճակն այն առթիվ, վոր ազնվակա-  
նությունն ու հոգեռականությունը զրկվել են պետե-  
րից («զի բարձաւ թագաւոր և քահանայ»), մինչդեռ  
Թոխմախյանն, ընդհակառակը, ուրախանում ե, վոր  
վերացել ե նույն ինքն ազնվականությունը և ցավում,  
վոր վերջինի տեղը բռնել ե հոգեռականությունը: Ա-  
լեքսանդրիայի ճեմարանի ու Վարագա զպրոցի սանե-  
րը տանել չեյին կարող իրար, և թերես Խորենացին:

\* Նույնը, եջ 23:

լինելը պարագլուխն այն ամբոխի, վոր Թոխմախյանի  
աճյունը շիրմից հանելով յոթը հովերին կըտար...

Յեթե Թոխմախյանը հայոց պատմության գիրք  
հորիներ, ապա մենք դառն ձշաբառություններ շատ կը  
լսելինք ե յերբեմն ել առիթ կոննայինք կարգալու  
ճիշտ այսպիսի ներողներ, վոր կարդում ենք Հայնեի  
«Զմեռային հեքեաթում»... Նա կըզայրացներ շիլ շովի-  
նիստներին, բայց ծառայած կըիներ գերազույն սրբու-  
թյունների—զիտության ու զիմոկրատիայի—շահերին՝  
այս գեպօւմ նշանաբան ընտրելով բանաստեղծի տո-  
ղերը.

«Արյան փայլով, տանջանքներով անմահացած»  
ինչպիս ցնորք յերեւմ են որերն անցած.  
Յես չեմ կարող նոցա նայել լուս պարծանքով,  
Այլ մի խորին ցավակցության զգացմունքով:  
Ի՞նչ մեղ թողին մեր քաջարի, գոված նախնիք.

—Լացի, վաղի անփառունակ մի հայրենիք:  
Յեկ անձրես ծաղկապսակ վառ փունջերի,  
վոր մանկական բերկրությունով անմիտների  
յուազին ենք մենք տարածում, յես մի նշան  
Համարում եմ մեր փոքր հողու աղքատության...\*

\* Հոգի Հովհաննիոյան. «Բանաստեղություններ», Վա-  
ղարշապատ, 1908, եջ 18:

## Դառնանք ներկային:

Համարձակ կարելի յի ասել, վոր ոռւսահայ կյանքի ու գրականության մեջ վոչ մի հասարակական խնդիր այնքան մեծ տեղ չե բանել վորքան տաճկահայոցը. Բայց չնայած, վոր վերջին 50—60 տարվա ընթացքում այս բազնին և նվիրել հեղինակն իր հոգեսասան գրիչը, ճարտասանն իր ալախոս լիզուն, ժողովուրդն իր աղքատիկ քսակն ու յերիտասարդն իր շառագույն արյունը, այնուամենայնիվ սխալ չի լինի ասել, վոր մինչև այժմ կուռքն ու զոհաբերողն իրարուց բաժանված են յեղել մի թանձը վարագույրով. տաճկահայի վիճակին մոտից ծանօթ չեն յեղել վոչ միայն ոռւսահայ ընթերցողները, այս և հորինող ու դիտուն ինտելեգինտները. Այն, նայ մտավորականը, վոր լափում և անխտիր հազարավոր յերկեր յևլրոպական ու ուստաքականությունից, վոր կրկնում և անհամար ոտարադգի գիտնականների ու փիլիսոփանների անուններ, վոր բարբառում և վորոտաձայն ամեն գիտությունից, ավանդ, տեղեկություն չունի այն միջավայրի մասին, վորի համաւայնքան պոհաբերություններ են արել մի քանի սերունդներ:

«Յ. Ակըլի ուսումնափրություն—ահա ինքնին մի պատկառելի գործ,—զբում և հայ կազմակերպույժան արտասահմանի մի հայտնի դեկավար՝ ավելացնելով հետեւյալ կակծալի խոստովանությունը: — Ա, հա մի գործ, վորով զժքախտարար մինչեւ որս շատ քիչ ենք զբաղվեր, գրեթե չենք:

Դ բ ա զ գ ե լ : Յ ա վ ե հ ի շ ա տ ա կ ե լ վ որ ք ս ա ն տ ա ր ու ց  
ի վ ե ր յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն ե ր ը չ ե ն  
կ ա տ ա ր ե լ մ ի հ ա տ ի կ լ ո ւ ր ջ հ ե տ ա զ ո-  
ա ռ ու թ յ ու ն ա յ ն տ ա ն տ ե ս ա կ ա ն ու ց ե ղ ա յ ի ն մ ի ջ ա շ-  
վ ա յ ր ի մ ա ս ի ն , ու ր խ ա ղ ա ց վ ե լ և հ ա յ կ ա կ ա ն կ ո ի վ ու ու  
վ ո ղ ե ր գ ո ւ թ յ ու ն ը : Մ ե ն ք չ ո ւ ն ի ն ք դ ե թ մ ի  
հ ա տ ի կ լ ո ւ ր ջ գ ո ր ծ հ ա ր կ ա տ վ ո ւ թ յ ա ն ս խ ա կ մ ի  
կ ա մ ս խ ա ե մ ն ե ր ի մ ա ս ի ն հ ի ն ո ե ժ ի մ ի տ ա կ է չ ո ւ-  
ն ե ն ք վ ո չ ի ն չ ե ն ո ղ ա յ ի ն ու ա ր հ ե ս ա տ ա յ ի ն վ ի ճ ա կ-  
ն ե ր ի մ ա ս ի ն , ա յ լ և ա յ լ ժ ո ղ ո վ ո ւ թ ր դ ն ե ր ի պ ա ր ա պ մ ո ւ ն ք ի ք  
հ ա մ ա յ ն ա կ ա ն կ ե ն ց ա ղ ի , զ ա ս ա կ ա ր գ ա յ ի ն շ ե ր ա ա վ ո ւ մ-  
ն ե ր ի մ ա ս ի ն և ա յ լ ն : Զ կ ա շ ա տ թ ե ք ի չ ա ր-  
ժ ե ք ա զ ո ր ո ւ ս ո ւ մ ն ա ս ի ր ո ւ թ յ ու ն մ ե ր  
գ ր ա կ ա ն ո ւ թ յ ա ն մ ե ջ թ ու ր ք ի ա յ ի ը ն դ հ ա ն ո ւ ր ի ր ա վ ա կ ա ն  
կ ա ց ո ւ թ յ ա ն մ ա ս ի ն հ ի ն ո ե ժ ի մ ի տ ա կ է վ որ ս ա հ մ ա ն ա -  
զ ր ո ւ թ յ ու ն ը հ ա վ ա ն ո ր ի ն չ պ ի տ ի կ ա ր ո ւ զ ա ն ա կ ա մ չ պ ի-  
տ ի կ ա մ ի ն ա հ ե ղ ա շ ր ջ ե լ շ ո ւ տ ու ա ր մ ա տ ա պ ե ս օ ...\*

Յեզ այս «Հկա, չունինք, չենք զրազվու»-ը ու  
բերում և վոչ թե հեռավոր ծնիկի ասադին, վոչ թե  
բեկում գտնվող վորեն սացցապատ հողամասի, այլ  
մեր հայրենիքի մի կարեոր հատվածին, վորի մասին  
խոսելու սակայն մենք փոխ ենք առնում ուրիշի կո-  
ղորդի լարերն անդամ։ Ահա այս «Հկա, չունինք,  
զրազվել»-ն և պատճառ, վոր մենք նույնիսկ մինչև  
այժմ տաճկահայ հասարակության դրության ու կտ-  
րիքների մասին նույն ըմբռնումն ունենք, ինչ վոր ու-  
նելին սրանից 50—60 տարի առաջ։

\* Միքայել Վարանդյան, «Վերածնվող հայությանի ընթացքը», էջ 366:

Այն ժամանակ կարծում եյին, վոր տաճկահայի ըստոր թշվառությունների միակ սրատճառը տիրող քաղաքական կարգերը կամ, ավելի ճիշտը, անկարգությունն եր. Կեղեցող թուրք ու յափշտակող քուրդ—անա այն գիշտատէչները, վորոնք հոշոտում եյին տաճկահայի մարմինը:

Ի՞նչ խոսք, վոր չափազանց ծանր եր տաճկի լուծը, անզութ ու հատու՝ քրդի յաթաղանը, ծովացած եր արյունը և զարհուրեկի՝ կոտորածները, բայց և այնպես կարձատեսություն կը լիներ, յեթե տաճկահայի բոլոր վերքերի պատճառ համարեցինք միայն տիրող բռնակալությունն ու անխշխանությունը ճիշտ այնպես, ինչպես սխալ կը լիներ, յեթե մոռանալով ժամանակակից տնտեսական կարգերի ազդեցությունը՝ Սաղեմի թշվառ զափակների—հրեա զյուղացու ու բանվորի աննախանձեկի վիճակը վերտգրեյինք միայն այն քաղաքական պայմաններին, վորոնցում ապրում են նրանք. Անշուշտ, գովելի յե այն ձիգն ու մարտը, վոր մզգում և հանուն տաճկահայ ժողովրդի քաղաքական իրավունքների, սակայն և այնպիս աշալուրջ գործիչը չպետք ե մոռանա, վոր Յեփրատի ու Տիգրիսի հովիտներում խիզնությունն ու աղքատությունը այլ պատճառն եր ել ունեն, պատճառներ, վորոնք ավելի ավերիչ ու յերկարատե են, քան քաղաքականապիս իրավագուրկ կացությունը:

Արտեն Թոխմախյանն եր այն մտավորականը, վոր 30—32 տարի առաջ, գեռ ևս 80-ական թվականների սկզբին, ամենից ավելի վորոշ մատնանիշ և յեղել այն հիմնական չարբիքի վրա, վոր արմատ ձգելով տաճկահայոց կյանքում ծծում ե սրա կինսատու հյութերը:

Ի՞նչ չարիք ե այն:

«Տաճկահայաստանի քաղաքացին անհամեմատ ավելի բարձր ե զյուղացուց ամեն կողմից, վորի դեմ զյուղացին չի կարողանում մրցել, այլ յենթարկվում ենրա ազգեցությանը. Վորովհետեւ այժմյան հայ քաղաքացու բնագործության մեջ ազգային բարեմասնությունից վոչինչ չկա, այլ այլ (քաղաքացու, Թ. Ա.) ազգեցությունը բոլորովին յևսասիրական լինելով՝ ն ագուշ գացու հարստա արագ ն երի շարու գին տեղն ե բանում մ: Այստեղ քումը առաջին տեղն ե բանում: Ամեռնի սուրբ քրիստոնեյի տան «խեր-բարաքյաթը», «մեռնի սուրբ ավագանի շնորհի ազգեցությունը նվազ նշանակություն ունին»:\*

Ի՞նչ անակնկալ հին ազգասերների համար: Վոր պիսին նորություն մեր իգելորդիական աշխարհում:

Մինչդեռ մենք միշտ բողոքում եյինք արտաքին թշնամիների դեմ, ահա մի համարձակ դիտող աղաղաթինամիների վեհ գլուխ ե բարձրացրել մի ներքին թշնամի, կում և, թե գլուխ ե բարձրացրել մի ներքին թշնամի, վոր ավելի վտանգավոր ե, քան արտաքինը: Մինչդեռ մենք միշտ ուշադրություն եյինք գարձնում այն հրուսակների վրա, վորոնք գաղանաբար ձյուղակոտոր եյին անում հայրենի պարտեզը, ահա մի հմուտ այգեպան մեր հայացքը դեպի ցած ե հրավիրում և ցույց տալիս ստորաքարշ վորդերի մի բազմություն, վոր արմատից և կտրում ու չորացնում խնամած բույսերը: Մինչդեռ և կտրում ու չորացնում եյինք, վոր Տաճկահայաստանում քամենք կարծում եյինք, վոր Տաճկահայաստանում վասակում են կիսագնդն ու զյուղը հավասարապես վասակում են հայրենատուր լուսնի սեժիմից, ահա թի շինականալաշտ հայրենատուր:

\* Թոխմախյան, նույն յերկ Բ. գրեալի եջ 14:

+ մեզ սթափեցնում ե քնից՝ լուր տալով, թե արդեն ըս-  
կըսվել ե քաղաքի ու գյուղի որհասական պայքարը,  
սկսել ե մի նոր, անազմուել, բայց անազորույն կռիվը,  
վոր մղում ե միենույն հասարակության մեջ դասա-  
կարգը դասակարգի գեմ, քաղաքացին՝ զյուղացու գեմ,  
փողը՝ հողի գեմ, շահազործումը՝ արդար աշխատանքի  
գեմ և ապրանքային արտադրությունը՝ բնական տնտե-  
սության գեմ:

«Ամեն կարգի քաղաքացիները,—սկսում ե ման-  
շամասնորեն բացատրել մեր հեղինակը,—վորոնք պա-  
րապում են առուտուրով, արձեսաներով, տերության  
ծառայությունով, իրանց պարագմունքների արտա-  
դրած ուղղակի շահերով չքավականանալով՝ ցանկանում  
են և կողմնակի շահեր ունենալ։ Այդ ամենը յուրաքանչյուր պատրաստ ծառայությունը հայտնում են զյուղացուն,  
հոգալով նրա զգեստեղենների պիտույքը և փոխառա-  
կան գրամ։ Այդ ոպերացիայի մի տեսակը կոչվում է  
«օսալաֆ»։ Քաղաքացին զյուղացուն դիցուք տալիս ե  
մի սամանյան վոսկի կամ նրա արժողությամբ ապ-  
րանք, վորը պարտավոր և մերձակա հունձին մի փո-  
խառությանը յերկու չափ ցորյան տոկոս վճարել այժ-  
մյան զնով յեթե հաշվենք, մի սամանյան վոսկին կաղ-  
մզած և հինգ մեջիգից, ուրեմն քաղաքացին զյու-  
ղացուց վեց ամսվա ընթացքում մի սամանյան վոսկուն  
2/5 կամ հինգ մեջիգից յերկուսը տոկոս և ստանում։  
Յեթե վեց ամսվա ընթացքում տաս միջիգիան ըերեւմ  
և չորս տոկոս, նշանակում ե, վոր տարին ութ տոկոս  
և ընկնում կամ հարյուրին ութսուն։ Այս ձեւը տո-  
տի ճանաբար սնանկանալու ձեւն ե, վոր  
հետզհետե զյուղացուն հոգը, կայքը

ընկնում և վաշխառութեառքը և այս  
նունեատեանա գառնում և քաղաքացու  
արծաթագին ստրուկը կան զյուղացիներ,  
վորոնք հանկարծական պիտույքի համար ծախում են  
իրենց ցանածի, աշնցանի կամ գարնցանի կանաչը. վո-  
րովհետև այդ կանաչների արդյունքը ակներկ չե, քա-  
ղաքացիք ամենաշնչին զնիքով տեր են զանում զյու-  
ղացու քրտանց արդյունքներին: Յերբ զյուղացին վո-  
րեւ կերպով վաճանգվում ե, որինակ՝ յեթե զողանում,  
հափշտակում են նրա յեզները, անստունները կամ վա-  
րակիչ հիվանդություններից սատակում են, յեթե այ-  
րում են նրա զեզը և մարտզը, յեթե յերաշտից, մորե-  
խից կամ մկներից վոչնչանում ե նրա ցանքը, այսպիսի  
հաղար ու մի տեսակ հանգամանքներին յենթարկված  
զյուղացին վոխտառու ընկերություններ ընկելուց՝ վե-  
րականզնելու մտոք զիմում և վաշխառութին, զնում և  
նրա վոտի տակ իր տունը, տեղը, կայքը, հողի սեփա-  
կանության իրավունքը և ստանում և ցանկացած վո-  
ղացիքի պայմաններով և տոկոսով, վոր յերեք  
չ կարողանալու հատուցանել ու այդպիսով  
գյուղական ընտանիքներ կործ ան-  
գում են անկան գնելի կերպով:\*

Ծատ հն խոսել հայ զրականության ուշ առաջ-  
հայոց պանդիտության մասին։ Հայտնի յե, վոր զեռ  
և Միքայել Նալբանդյանը թախծով գիտում եր, թե  
ինչպես հայ ազգը որբասորե թողնում է իր յերկիր-  
ները և կենարոնանում է քաղաքներում, ինչպես ազ-  
քատությունն ատիպում է նրան թողնել իր տունն ու

տեղը, իր ընտանիքը և գնալ Պոլիս կամ այլ քաղաք աղքատությունից աղասավելու համար, վորաեղ նրան հանդեպ և գալիս եազես նույն աղքատությունը, զուցե մի փաքր քաղաքային ամոք կերպարանքով։ Հանրածանոթ և նշանավոր հրապարակախոսոի սրտաշարժ նըկարագրությունը, վորի մեջ պատկերացնում և թե ինչպես մշակն իրեւ գրաստ, իրեւ մեքենա ծառայելով արտասվելի ոստարության մեջ տաս-քսան աարի՝ կամ մեսնում և այստեղ՝ թողնելով իր ընտանիքը ծայրացյալ թշգառության մեջ և կամ վերադառնում և իր յերկիրը հաստի առած, ուժաթափ ու թոշնած, վերադառնում և իր ներկայությամբ իր աղքատ ու կարոտ ընտանյաց թիվն ավելցնելու համար և այլն։ Հիշենք Տիգրան Ամիրճանյանին, վոր իր «Ուսյալ պանդութառվ» ու մանավանդ «Պանդուխտ վասպուրականցին իր ընկերոջը» հայտնի սրտառուչ վոտանավորով բոլորի ուշադրությունը հրավիրում եր հայրենիքի այս վերքի վրա և աղաղակում։

«Որև որ ծով կբարձրանա, շատեր խեղդեց,  
յամո՞ն, մեկ ճար...»

Սակայն արդարությունը պահանջում է առել, վոր վոչ վոք, վոչ ել նույն իսկ Միքայել Նալբանդյանը, չը կարողացավ յերևույթների խորքը թափանցելով բացատրել, թե ինչից և առաջանում տաճկահայի աղքատությունը, վոր նրան ստիպում և դիմել ոտար յերկիր, Պոլիս, Տրապիզոն, Գահիրե, Նյու-Յորկ և այլն։ Այն ինչ Թոխմախյանը պարզ գիտակցում է, վոր տաճկահայի պանդառության պատճառը վաշխառությունն է, ութեամ և վերջին կետում՝ տնտեսական այն պայման-

ները, վորոնք հնարավոր են դարձնում վաշխառությունը։

«Վորքան վոր դյուռ կերը մատ են քաղաքին, այդ չափով եւ ավելի խիստ քաղաքացոց հարը ստահարության ց և ավելի շատ աղքատ հանուն Որինակ՝ Վանա շրջապատի թիմար անունով գավառը և Ծաղունյաց գավառի հյուսիսային մասը Վասպուրականի բոլոր գավառներում ամենախիստ կերպով հարստահարված, ամենից սաստիկ վտանգված աղքատներն են։ Դրանցից են կազմված վաղ մասն ու թյունը։<sup>\*</sup>

«Այսոր, մեծարդոյ ունկնդիր, — զիմում և Թոխմախյանը հանդիսականներին, — քո առաջից անդադար անց ու դարձ անողը, քո ծառայություններդ կատարուանց ու դարձ անողը, քո ծառայություններդ արարածը, վոր զը, քո ազգ ու կեղտ մաքրող ըրպեզած արարածը, վոր անցնում և իր որը գրաստի չարչարանքով, գիշերում և խոնավ, հոտած անկյուններումը, հեռու, կարոտ իր սիրելիներից, թաղվում և ակամայից քո քաղաքի ապականությանց մեջ, դա քո ձեռքից հարը ստահարությանց մեջ, դա քո ձեռքից նաև կին յեր կառը ծամայան ստրկացած մշակներ, վորի զուռը ժամանակով շատ մեծ եր քո դասից, նորա հյուրասեր հարկի տակ շատ քո նմանները ասպնջականություն են դտել շատ կարոտներ ողնություն, ապաստանարան, են դտել...»<sup>\*\*</sup>

\* Նույնը, եջ 16—17։

